ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԱԼԱՎԵՐԴԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՇՆՈՂ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շնող գյուղի պատմությունը սերտորեն առնչվում է Կայծոն ամրոցի հետ /10-11դդ./: Կայծոն-Շնող անվանափոխությունը կատարվել է 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: 1915 թ. Ախթալա կայարանից Շնող են հասցվել Մեծ եղեռնից փրկված 285 գաղթականներ՝ տեղահանված Արևմտյան Հայաստանի Բասենի, Էրզրումի նահանգի գյուղերից: Դրանց չնչին մասն է ապրել Շնողում:

Շնողի բուն տարածքում գտնվում են Կայծոն ամրոցի (10-րդ) միանավ եկեղեցու (10-րդ դ.) մնացորդները, Սուրբ Գևորգ (1893թ.) և Սուրբ Սարգիս (1894թ.) եկեղեցիները, Տերունական խաչարձան-մատուռը (1222թ.), Սուրբ Սարգիս մատուռը (17-րդ դ.), Ս.Նշան մատուռի մնացորդները (17-րդ դ.): Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին կառուցված է հուշարձան՝ 75-րդ տարելիցի առթիվ, գյուղի կենտրոնական հրապարակի եզրին կառուցված է հուշահամալիր՝ նվիրված Հայրենական պատերազմում զոհված 258 շնողցիների հիշատակին:

Շնող գյուղը այսօր ճանաչված, շեն ու բարեբեր բնակավայրերից է: Ունի միջնակարգ հանրակրթական դպրոց, մանկական արվեստի դպրոց, մշակույթի տուն, գրադարան, մանկապարտեզ, հայրենագիտական թանգարան, բժշկական ամբուլատորիա, փոստային բաժանմունք: Շնողցիների եկամտի հիմնական աղբյուրը հանդիսացել է բազմատարր գյուղատնտեսությունը: Այժմ շնողցու եկամտային աղբյուր է նաև հանքարդյունաբերությունը: Պապենական ճյուղերն են եղել այգեգործությունը, անասնապահությունը, բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը, թռչնապահությունը, շերամապահությունը: Շնողցին միշտ էլ առաջնահերթությունը տվել է ուսմանը, կրթությանը: Շնողը հայտնի է եղել ողջ հանրապետությունում իր՝ գիտությանը նվիրված սերնդի ներկայացուցիչներով:

Շնողցիներից դոկտոր-պրոֆեսորներ են 8 հոգի, պրոֆեսոր են 5 հոգի, գիտությունների թեկնածուներ և դոցենտներ են 40 հոգի, վաստակավորի կոչմանն են արժանացել 21 հոգի, գեներալ-մայորի կոչման է արժանացել 1 հոգի, գնդապետի կոչման՝ 2 հոգի, սպորտի վարպետի կոչման է արժանացել 6 հոգի:

Շնողի Սուրբ Սարգիս եկեղեցու բակում է գտնվում նաև 2020 թվականի 44-օրյա պատերզմի զոհերին նվիրված խաչքարը:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Շնողը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի արևելյան մասում՝ Դեբեդ գետի աջափնյա սարավանդի և հարակից ձորերով ու բլուրներով պատած բարդ ռելիեֆով տարածքի վրա: Վերջինս հյուսիս-արևմուտքից կտրվում է Դեբեդի կիրճով (գյուղին հարող մասում մինչև 200 մ խորությամբ): Կլիման բարեխառն է, չափավոր ու մեղմ ձմեռներով, մոտիկ է չոր արևադարձայինին:Տարեկան միջին ջերմաստիճանը 110 C^0 է, առավելագույնը՝ +38 C^0, նվազագույնը՝ -22 C^0, մթնոլորտային տեղումների տարեկան միջինը՝ 55 մմ: Գլխավոր գետը սահմանակից Դեբեդն է՝ Շնող վտակով:
Ծովի մակերևույթից բարձր է 670 մ-ով: Գյուղը շրջապատող անտառները հարուստ են արժեքավոր ծառատեսակներով, վայրի պտուղներով, հատապտուղներով, անասնակերով: Լեռնալանջերը, նախալեռնային տարածքները, գետահովիտները պատած են արգավանդ, բարեբեր հողատարածություններով:Տեղակայված է Դեբեդի վտակ Շնող գետի աջ ափին, Ալավերդի քաղաքից 18 կմ հեռավորության վրա՝ լեռնային անտառոտ վայրում:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	640
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	+22
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	38

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյանի շրջան
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	25
2.2) մայրաքաղաքից (կմ)	245
2.3) մարզկենտրոնից (կմ)	65
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	25
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	30
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	1
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	1,5
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	670
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	94.38/9438,45
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Քարկոփ բնակավայր, Թեղուտ բնակավայր, Ախթալա բնակավայր
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	+37477946342
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո/1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2758
2. Գրանցված ծնունդների քանակը	34
2.Մահացության դեպքերի քանակը	24
3.Ամուսնությունների քանակը	7
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	956
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	22
7. Կենսաթոշակառուների քանակը	625
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	143

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	0

4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	48760
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	6
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	946

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	9438,45
2. Բնակավայրերի հողեր (հա)	2466,35
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	533.33
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	961,95
5. Հատուկ նշանակության	50,22
6. Հատուկ պահպանվող տարածքների	-
7. Անտառային	19,37
8. Ջրային	7621,27
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1251
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	0
11. Խոզերի գլխաքանակը	0
12. Գյուղատնտեսական տեխնիկա	11
12.1 տրակտորներ (քանակը)	2
12.2 կոմբայններ (քանակը)	1
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	946

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	5
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	25

6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	36
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	0
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	2
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	10
1.1 համայնքային ծառայողներ	2
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	4

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Անբարեկարգ ճանապարհների առկայություն:	Անբարեկարգ ճանապարհների բարեկարգում:
Ոռոգման ջրի բացակայություն:	Ոռոգման ջրի ցանցի անցկացում:
Խմելու ջրի մատչելիության անբավարար մակարդակ:	Խմելու ջրի ցանցի բարելացում:
Լուսավորության ցանցի ոչ լրիվ առկայություն:	Բնակավայրի ամբողջական լուսավորություն: